Հ ա յ ա ս տ ա ն ի Հ ա ն ր ա պ ե տ ու թ յ ու ն
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության
«Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ»
պետական ոչ առևտրային կազմակերպություն

«___» _____ 2022 թ. N_____

Ձեր ՄՆ//7660-2022 23.03.2022թ.

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մուրադյան,

Հայտնում ենք, որ «Անձնական օգնականի ծառայություն տրամադրելու կարգը և պայմանները հաստատելու մասին» կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ԿԱԳ իրականացումը նպատակահարմար չէ:

ԿԱԳ իրականացման աննպատակահարմարությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ներկայացված իրավական ակտի նախագիծը հանդիսանում է 2021 թվականի մայիսի 25-ին ընդունված «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» և «Հաշմանդամություն ունեցող անձի իրավունքների մասին» ՀՀ օրենքների կիրարկումն ապահովող նորմատիվ իրավական ակտ: Այս օրենքների հիման վրա ձևավորվում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և հաշմանդամության ճանաչման նոր համակարգը, որն արմատապես տարբերվում է գործող համակարգից և դեռևս չի անցել բավարար ընթացակարգային փորձարկում: Բացակայում են տվյալներ նշված օրենքների և նրանց կիրարկումն ապահովող իրավական ակտերի համաձայն իրականացված գործընթացների, ծառայություն ստացած շահառուների, նրանց գոհունակության կամ օրենքների ու իրավական ակտերի պահանջները կիրառելու դեպքում ի հայտ եկած խնդիրների վերաբերյալ:

Այս հանգամանքը հնարավորություն չի տա վերլուծել ներկայացվող նախագիծը ըստ ծախս-օգուտ համադրման, հիմնավորված սահմանել վերլուծության ենթակա խնդիրները, բացահայտել դրանց ի հայտ գալու պատճառները, գնահատել այդ խնդիրների մեծությունը և իրականացնել ՀՀ կառավարության 17 դեկտեմբերի 2020 թվականի N 2075-Ն «Կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը, ժամկետները և դեպքերը, դրա արդյունքում տրվող եզրակացությանը ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման համաձայն ԿԱԳ-ի շրջանակներում նախատեսվող մի շարք այլ վերլուծություններ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Վ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ